

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՉԽԱՐԱՑԻՆ ԽՈՐՅՈՒՐԴԻ

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ՝

ԳՐԿՈՒԱԾ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդ

Կեդրոնական Վարչութիւն

ՅՈՒՂԻՍ-ՕԳԽԱՍՏՈՒ 1977

Դ Ա Ի Ա Ն Ո Ղ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ը

ՆԱՄԱԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ

«Եկեղեցու առնել զաշս սրտից, առ ի գիտելոյ մեզ  
զի՞չ է յայս կռչման նորաց:

«Եկեղեցու մեր սրտերում աչքերը, որպէսզի  
զիտնամի ինչ է անոր կռչիմ յոյսը»

(Եփեսացոց II 18):

Եղբայրներ և քոյլեր ի Քրիստոս,

Կ'ողջունենք ձեզ բոլորդ Յիսուս Քրիստոսի անունով: ՄԵՆՔ ձեր բա-  
րեկամիներն ենք ի Քրիստոս, զրկուած բազմաթիւ երկրամասերու եկեղեցինե-  
րէն, Հաւաքուելու այստեղ իրեւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի

ՆԱՌՈՒ. ԽՄԲ.— Անցեալ ամառ, Եկեղեցիներու Համաշխարհային  
Խորհուրդի Կեդրոնական Վարչութիւնը, տարեկան իր ժողովը գումարեց Ժո-  
նևի մէջ: Փողովին մասնակցած Գերշ. Տահէ Արքեպիսկոպոս և Տ. Ար-  
սէն Եպիսկոպոս, Մայր Արքունի կողմէ:

Նայրովիի մէջ գումարուած 1975-ի Ընդհանուր Փողովին ի վեր, Հա-  
մաշխարհային Խորհուրդի անդամ Եկեղեցիներէն ներս զարգացան հիմնական  
մասհոգուրին մը: Պործակցութեան, համերաշխութեան եւ, ի վերօյ, միու-  
թեան ողի մը զարգացնել տեղական համայնքներուն մէջ, որպէսզի սիրոյ ի-  
րենց կեանքով ըլլան դաւանող Եկեղեցիները, իրենց շրջապատր լուսաւորող Ա-  
ւետարանի հշմարանութեամբ:

Այս մտահոգուրինը մղեց Եկեղենական Վարչութեան անդամները  
խմբագրելու նամակ մը, ուղղուած անդամ Եկեղեցիներուն, խրախուսելու հա-  
մար տառապեալները, ներշնչելու՝ տկարացողները եւ բոլորին այ քերելու  
ժոյը Եկեղեցիներու նոր խանդ՝ առաքելական իրենց զործին մէջ:

կեդրոնական վարչութիւն : Մենք կը պատկանինք տարրեր ցեղերու և մշտակոյթներու : Մենք երջանիկ ենք Աստուծոյ մեզի պարզեւած այս զանազանութեան համար , եւ սակայն մենք կը ներկայացնենք բաժանումները որոնք կը պատուն մեր աշխարհը : Մենք բխում առած ենք քրիստոնէական տարրեր աւանդութիւններէ : Մենք ուրախութիւնը ունինք այս հարստութեան , թէ եւ ոնինք նաեւ ցաւը պատկանելու բաժանուած եկեղեցիներու : Երբեմն պէտք է ծանրը պայքար տանինք , հասկնալու համար մէկը միւսին , եւ արտայայտելու համար հասարակաց մեր կոչումը : Մենք ուսումնասիրեցինք մեր նիւթը . «Դաւանող Համայնքը» , Եփեսացւոց Առաջին Գլուխի 15-23 Համարներու լորին տակ , եւ մեր , քրիստոնեաներուս , ապրած տարրեր կացութիւններու առնչութեամբ այսօրուան աշխարհն մէջ , նաեւ Հրատապ այն Հարցերու կապակցութեամբ , որոնց դէմ յանդիման գտնուեցանք մեր ժողովի ընթացքին :

Մենք մխիթարուած զգացինք լսելով Համայնքներու հաւատքի մասին , աշխարհի տարրեր մասերուն մէջ , որոնք կը գաւանին զՔրիստոս իրենց սրտով եւ բերնով , իրենց խօսքով եւ կեանքով : Այս վկայութիւնը միշտ զահողութիւն մը կը պահանջէ : ոմանց Համար նոյնիսկ անցնող տարուան ընթացքին ան պահանջած է մարտիրոսութիւն : Ոմանք Հալածուած են զաւանած ըլլալնուն Համար իրենց հաւատքը , ուրիշներ մէկ կոզմ նետուած են . ոմանք մերժուած են այն ընկերութիւններէն ուր կ'ապրին , ուրիշներ ստիպուած եղած են զիմաղրելու այն Հրապոյրներուն որ այդ ընկերութիւնները կը ներկայացնեն : Ոմանք իրենց դաւանանքը կ'արտայայտեն Հրապարակային վիճաբանութիւններու կրկէսին մէջ , ուրիշներ ամուր կը կենան իրենց հաւատքին մէջ՝ երբ Հրապարակային գիմաց խոչընդուներ կը դրուին :

Դաւանելով իրեւ քրիստոնէական Համայնքներ , մենք կը ցոյացնենք «Հաւատքի դեղեցիկ զաւանութիւնը» , կատարուած նոյնիքն մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսու կողմէ (Ա. Տիմոթէոս 213) : Ան կը բերէ մեզի յարութեան յոյսը , կրելով իր մարմինին վրայ իր չարչարանքներու վէրքերը : Ան կը կրէ աշխարհի մեղքերը : Ան բաժնեկից է մարդկութեան պայքարներուն : Ան կոչ կ'ընէ Եկեղեցիին որ վկայութիւնը բերէ իր յաղթանակին «իշխաններու եւ պետութիւններու» , եւ մեզի կու տայ պայքարելու ուժը՝ չարի բոլոր ուժերուն դէմ : Ան է միայն Տէրը , որմէ զուրս ուրիշ տէր չի կրնար զոյտութիւն ունենայ . անոր Համար Ան զատաստանի կ'ենթարկէ որեւէ ուրիշ պատկանելիութիւն՝ որ կը ճնշէ մեր կեանքերուն վրայ :

Սուրբ Հոգին կը լուսաւորէ մեր սրտերը եւ մեր Հոգիները , որպէսզի տեսնենք յարութիւնը Յիսուսի մէջ եւ ձանձնանք այս երկրի վրայ իր Եկեղեցիի կերպին մէջ իր մարմինի աստուածային փառքը : Անգամները այդ մարմինին , մենք մեր սնունդը կը ստանանք Տիրոջ սեղանէն եւ , սուրբերու ամրող Համայնքին Հետ , մենք կը Հրճուինք որբասացութեան եւ փառարանութեան ծիսակատարութեան մէջ : Յուսահատութեան ամենին մութ ժամերուն , մենք կը լունք Զատիկիի պատկամը . «Տէրը յարութիւն տաած է» : Եւ մենք կը պատասխանենք սրտով եւ բերնով . «Երապէս յարութիւն տաած է» : Հրաւէր կ'ուզգենք ձեզի , որ միասին երգենք յարութեան ուրախութիւնը , եւ փառք տանք Աստուծոյ այս բարի լուրի տըւչութեան Համար :

Սակայն ո՞վ ենք մենք որ երդենք յաղթանակի երդը : Իբրև քրիստոնէական համայնքներ մենք կը տօնախմբենք յաղթանակը, սակայն կը թուինք ապրի: պարտութեան մէջ: Մենք կը պաշտենք կենդանի Տէր մը, սակայն չենք կատարեր իր յանձնարարութիւնները: Կ'ըսենք թէ կ'ուզենք Հետեւիլ իրեն, սակայն կը վախճանք երթալու Հոն ուր Ինք կ'առաջնորդէ մեզի: Կը յաւակնինք ըլլալ Թագաւորութեան նշաններ, սակայն մենք պարզ կրկնութիւններն ենք յանափառ համայնքներու որոնք կը շրջապատեն մեզ: Կոչուած ենք մասնակցեաւ Քրիստոսի զործին՝ աշխարհի փոխելու, սակայն մենք կը համակերպինք, առանց խորութեան, մեր ընկերութիւններու կերպարներուն: Մենք առաքուած Ենք պատգամելու համար «քարի լուրը աղքատներուն», բայց կը մերժենք ըւեւ թէ ինչ կը նշանակէ այդ լուրը մեզի համար: Կը յայսարարենք «ազատութիւն նշանաձններու», բայց կը տատամանինք վճարելու դինք մեր գաշնակցութեան անոնց Հետ: Կը հաստատենք մեր պատասկումը ի Քրիստոս, բայց չարի ուռկաններուն մէջ բռնուած ենք: Կանչենք միասին .

Անմահ Հայր, ազատագրէ մեզ:

Կը Հրաւեիրենք ձեզ հարցնելու մէկը միւսին Հետեւեալ հարցումներէն մի քանին, կացութեան համաձայն ուր կը զտնուիք.

— Ինչպէս կը դաւանինք զՔրիստոս մեր խօսքերուն, մեր արարքներուն, մեր կեանքին եւ մեր առօրեայ զբազումներուն բնորմէջէն:

— Ինչպէս կը բաժնենք մեր Հաւատքը ուրիշներու Հետ, մեր ընտանիքներէն ներս, մեր շրջապատէն ներս եւ աշխարհին մէջ:

— Ինչպիսի՞ Հակադրութիւններու կը հանդիպի մեր դաւանանքը ի Քրիստոս:

— Ինչպիսի՞ փոփոխութիւններ պիտի յառաջանային մեր համայնքներու կեանքին մէջ, եթէ ըլլայինք ամբողջապէս Քրիստոսը դաւանող համայնքներ:

— Ինչպէս կրնանք օդնել իրարու, բանալու համար մեր կեանքը Քրիստոսի:

— Ինչպէս կրնանք օդնել մէկը միւսին, իրրեւ քրիստոնէայ պատասխանելու համար այն Հակադրութիւններուն որոնք մեր առջեւ կը զտնուին մեր առօրեայ աշխատանքներու բնթացքին:

— Քրիստոնէութիւն դաւանիլը ինչո՞վ կը բաժնէ մեզ ուրիշներէն. ինչպէս կը միացնէ մեզ անոնց:

— Ո՞ւր կը հանդիպինք մենք կիներու եւ մարդերու՝ զրկուած իրենց արժանապատութենէն որ իրենց իրաւունքն է, եւ ի՞նչ կ'ընենք իրրեւ դաւանող համայնք այդ կացութիւնները զարմանելու:

Մենք յանձն կ'առնենք աղօթել մէկը միւսին Համար և մասնակցիլ Քրիստոսի բարեխօսութեան շուրջ առաքելութեան մէջ: Այդ բարեխօսութիւնը դաւանանքի համայնքը ուժեղացնելու միջոց մը չէ միայն, այլ անոր կենդանի աղրիւրն է: Կը Հրաւեիրենք ձեզ աղօթելու:

— Անոնց համար, որոնք նոր մուտք զործած են դաւանող համայնքներու, որպէսզի Հոգին բերէ իր պառուզները անոնց կեանքին ներս :

— Անոնց համար, որոնք հանգստորէն հաստատուած են իրենց Համարին մէջ, որպէսզի Հոգին արթնցնէ զանոնք նոր տեսիլքով:

— Անոնց համար, որոնք լքած են Եկեղեցին այն զդացումով որ ան ու ինչ ունի տալիք իրենց, որպէսզի Քրիստոս վերագոնէ զանոնք աղօթքին ծառադրութեան եւ իր Եկեղեցիին դաւանութեան միջոցաւ:

— Անոնց համար, որոնք Եկեղեցիին կու զան փնտութով իրենց ձամբան, որպէսզի ընդունուին անոնք իրապէս դաւանող համայնքի մը կողմէն, որ առաջնորդէ զանոնք Քրիստոսի:

— Անոնց համար, որոնք կը տառապին Աստուծոյ սիրոյն, որպէսզի ուրախանան յոյսով եւ վատահութեամբ թէ Տէրը իրենց հետ է:

— Անոնց համար, որոնք կը փնտուն հպատակութեան գիւրին ձամբան, որպէսզի սորպին շարկել խաչը եւ հետեւիլ Յիսուսի:

— Անոնց համար, որոնք զրաւուած են իրական պայքարով ազատութեան եւ արգարութեան, խաղաղութեան եւ Հաշուութեան, որպէսզի անոնց նեցուկ զանեն դաւանող համայնքի օգնութեամբ:

— Անոնց համար, որոնք կոյր են կամ անտարբեր աշխարհի պէտքեռուն նկատմամբ, որպէսզի սորպին ուրիշներու պէտքերը տեսնել Քրիստոսի աշքերով:

— Բոլոր համայնքներուն համար, որոնք կը զաւանին զՔրիստոս, որպէսզի արտայայտեն Անոր Մարմինին միութիւնը, ապաշխարհելով եւ զզջալով ամէն այն բաներէն՝ որոնք կը պահեն արդ միութիւնը աշխարհի աշքերէն:

— Բոլոր անոնց համար, որոնք կը զաւանին Քրիստոսը իրեւ Տէր, որպէսզի անոնց խօսքերը իրապէս հաշիւ տան իրենց արարքներուն, որպէսզի անոնց արարքները ամբողջովին արտայայտեն իրենց սէրը, որպէսզի իրենց սէրը հաւատարիմ ցոլքը ըլլայ Տիրոջ:

Տէր Աստուծ, կ'աղաչենք որ մեր սիրտերուն այքերը բանաս տեսիւթեամբ Հոգիովդ նորոգուած աշխարհի մը, որ բանաս մեր բերանները՝ որ կարգան անունը Յիսուսի, որ բանաս մեր կեանքերը Քրիստոսի, որպէսզի Քրիստոս դարձի ուժով՝ Մենք միասին կը տօնախմբենք յարութեամբ յաղթական Տէրը: Օդնէ մեզի որ դաւանինք եւ աշխատինք սպասումին մէջ վերջնական յաղթանակին, երբ Քրիստոս պիտի հաւաքէ ամէն բան իր փառքին մէջ եւ իրը պիտի ընէ աղդերը: «Զի քո է իշխանութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն»: